ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Էքսպեր. և կլինիկ. բժշկ. ճանդես

XIII, № 2, 1973

Журн. экспер. и клинич. медицины

УДК 612.661+618.17—008.8

Ս. Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԱՇՏԱՆԱՅԻՆ ՑԻԿԼԸ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄԸ ԱՐՏԱՇԱՏԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՄՈՏ

Հետազոտել ենք Արտաշատի տարբեր դպրոցների 7—8 տարեկան 1154 աղջիկների սեռական հասունացման առանձնահատկությունները։ Դիտարկումներից պարզվել է, որ երկրորդային սեռական նշանների ինտենսիվ զարգացումը հիմնականում դիտվել է 12—14 տարեկան հասակից, որը համընկել է դաշտանի սկսման տարիքին։

Սովորաբար երկրորդային սեռական նշանների զարգացմանը հաջորդել է դաշտանը, որը սկսվել է 13,49±0,05 տարեկանում, հիմնականում եղել է կանոնավոր, չափավոր, անցավ։

Միաժամանակ պարզվել է, որ երկրորդային սեռական նշանների զարգացումը 18 տարեկանում չի ավարտվել։

Երեխաների և դեռահասների ֆիզիկական ու սեռական զարգացման տարիքային առանձնահատկությունների ուսումնասիրությունը բոլոր բժշկական հաստատությունների կարևոր խնդիրն է հանդիսանում։ Առանձնահատուկ նշանակություն ունի նախաարբունքային շրջանին հետևելը, քանի որ սեռական գեղձերի գեներատիվ ֆունկցիայի հետ սկսում են աճել ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշները, առաջնային ու երկրորդային սեռական նշանները, ապա սկսվում է դաշտանային ֆունկցիան։

Տարբեր աշխարհագրական և կենցաղային պայմաններում դաշտանն սկսվում է տարբեր տարիքում [3, 5, 11 և ուրիշներ]։ Գրականության մեջ կան տվյալներ և այն մասին, որ վերջին տասնամյակում մեր միության տարբեր վայրերում նկատվում է աղջիկների ավելի վաղ սեռական հասունացում [2, 4, 6, 9 և ուրիշներ]։

Մենք ևս զբաղվել ենք այդ հարցի ուսումնասիրությամբ, հաշվի առնելով տարբեր գործոնների ազդեցությունը սեռական հասունացման վրա։ Արտաշատի տարբեր դպրոցների 7—18 տարեկան 1154 աղջիկների մոտ ուսումնասիրել ենք սեռական հասունացման որոշ առանձնահատկությունները։

Սովորաբար սեռական հասունացումն սկսվում է երկրորդային սեռական նշանների ի հայտ գալով։ Երկրորդային սեռական նշաններն են՝ բուսականության աճը անության փոսերում և ցայլքի վրա, կրծքագեղձերի զարգացումը և դրա հետ կապված օրգանիզմի ընդհանուր փոփոխությունները։ Երկրորդային սեռական նշանների ճիշտ գնահատման համար օգտվել ենք միությունում ընդունված՝ Ա. Բ. Ստավիցկայայի և Դ. Ի. Արոնի [12] կողմից տրված ֆորմուլայով—A, P, Ma, Me։

Յուրաքանչյուր տարիքի համար սեռական հասունացման վերաբերյալ բոլոր ցուցանիշները մշակվել են առանձին- առանձին։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երկրորդային սեռական նշանների զարգացում մինչև 10 տարեկան հասակը դիտվել է մասնակի դեպքերում, իսկ հիմնականում այն սկսվել

է 11—12 տարեկանից և շարունակվել է հաջորդ տարիներին (աղյուսակ 1), չավարտվելով 18 տարեկանում։ Անութային փոսի բուսականությունն ավելի արտահայտվել է 14 տարեկան հասակից, կազմելով 68%, ցայլքինը՝ 13 տարեկանից (53,34%), իսկ կրծքագեղձերի զարգացումը՝ 13 տարեկանից (72,53%)։ Այսպիսով պարզվել է, որ երկրորդային սեռական նշաններից ավելի շուտ սկսվում է կրծքագեղձերի զարգացումը, ապա անութային և ցայլքի շրջանի բուսականության աճը։

Աղյուսակ 2

Երկրորդային սեռական նշանների զարգացումը Արտաշատի դպրոցական աղջիկների մոտ (տոկոսներով)

Քանակը	Դեպքերի թիվը	Անութային փոսի բուսականությունը				Ցայլքի բուսականությունը					Կրծքագեղձերի զարգացման աստիճանը			
		A_0	A_1	A_2	A_3	P_0	P_1	P_2	P_3	P_4	Ma_1	Ma_2	Ma_3	Ma_4
7	68	100,0	—	—	—	100,0	—	—	—	—	100,0	—	—	—
8	120	97,5	2,5	—	—	98,33	1,67	—	—	—	99,17	1,83	—	—
9	100	98,0	2,0	—	—	97,0	3,0	—	—	—	99,0	1,0	—	—
10	130	94,61	5,39	—	—	92,31	7,69	—	—	—	92,31	6,92	0,77	—
11	123	86,18	12,19	1,63	—	77,24	19,51	3,25	—	—	70,73	27,64	1,63	—
12	134	38,81	51,49	9,70	—	30,59	48,51	20,15	0,75	—	28,36	62,69	8,95	—
13	91	6,59	52,75	39,56	1,1	8,79	23,07	59,34	8,8	—	5,49	72,53	22,98	—
14	100	3,0	22,0	68,0	7,0	—	16,0	58,0	26,0	—	2,0	47,0	49,0	2
15	95	—	10,53	76,84	12,63	—	2,11	49,47	47,37	1,05	—	15,79	81,05	3,16
16	83	1,2	7,23	74,7	16,87	—	—	38,55	59,04	2,41	1,2	10,84	84,34	3,62
17	74	—	1,4	77,0	21,6	—	—	32,4	63,5	4,1	—	4,1	87,8	8,1
18	36	—	2,8	44,4	52,8	—	—	19,44	72,22	8,34	—	2,79	91,66	5,55

Ընդհանուր առմամբ, երկրորդային սեռական նշանների ինտենսիվ զարգացումը հիմնականում սկսվում է 12—14 տարեկան հասակից, որը համընկնում է դաշտանի սկսման տարիքին։

Դեռահասների օրգանիզմի զարգացման համար մեծ նշանակություն ունի առաջին դաշտանի սկսվելը, որով աղջկա կյանքում սկսվում է նոր շրջան՝ սեռական հասունացման շրջանը։

Սովորաբար երկրորդային սեռական նշանների զարգացմանը հաջորդում է դաշտանը, որը մեր կողմից հետազոտված 1154 աղջիկներից 400-ի մոտ է եղել՝ 34,56% (աղյուսակ 2)։ Առանձին տարիքային խմբերում դաշտան ունեցող աղջիկների թիվն ավելացել է սկսած 13 տարեկանից, առավելագույնի հասնելով 18 տարեկանում (աղյուսակ 3). դաշտան ունեցող աղջիկների ճնշող մեծամասնությունը (67,5%) 13—14 տարեկան է։

Ուսումնասիրություններից պարզվել է, որ Արտաշատի դպրոցական աղջիկների մոտ միջին դաշտանային տարիքը 13,49±0,05 է։

Աղջիկների սեռական հասունացման վերաբերյալ կատարված հետազոտություններից պարզվել է նաև, որ գյուղի և քաղաքի պայմաններում տարբեր տարիների առաջին դաշտանն սկսվում է տարբեր տարիքում։ Օ. Ցա. Սամսոնովայի [11] տվյալներով, 1900—1930 թթ. գյուղում ծնված աղջիկների մոտ դաշտանն սկսվել է 17,24±1,13 տարեկանում, 1931—1935 թթ. քաղաքում ծնվածների մոտ՝ 15,80±1,85, 1941—1945 թթ. ծնվածների մոտ՝ 14—15 տարեկանում, 1951—1955 թթ.՝ 14 տարեկանում։

Աղյուսակ 2

Առաջին դաշտանն սկսվելու ժամանակը

Երեխաների թիվը	Տարիքը												Ընդամենը
	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
Բացարձակ	—	—	—	—	13	50	136	134	62	5	—		400
Թիվը և %-ը	—	—	—	—	3,25	12,5	34,0	33,5	15,5	1,25	—		100,0

Աղյուսակ 3

Ցուրաքանչյուր տարիքային խմբում դաշտան ունեցող աղջիկների թիվը

Դաշտանի առկայությունը	Տարիքը											
	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Դաշտան են տեսել/ բացարձակ	—	—	—	—	4	9	42	72	82	81	74	36
Թիվը և %-ը.	—	—	—	—	3,25	6,72	46,15	72,0	86,32	97,59	100,0	100,0
Դաշտան չեն տեսել/ բացարձակ	68	120	100	130	119	125	49	28	13	2	—	—
Թիվը և %-ը.	100,0	100,0	100,0	100,0	96,75	93,28	53,85	28,0	13,68	2,41	—	—

Գ. Յա. Արեշևի [1] տվյալներով, Երևան քաղաքում առաջին դաշտանն սկսվել է 15,036 տարեկան հասակում, իսկ գյուղում՝ 15,209 տարեկանում, ըստ Պ. Հ. Մարգարյանի [8] 15 տարեկանում։

Սակայն վերջին տարիների ընթացքում Երևանում կատարված հետազոտություններից պարզվել է, որ առաջին դաշտանն ավելի վաղ է սկսվում։ Ըստ Վ. Մ. Մուսայելյանի [10] տվյալների, քաղաքում այն սկսվել է 13,7±1,1 տարեկան հասակում, իսկ շրջաններից եկածների մոտ՝ 14,7 տարեկանում, Ս. Մ. Գևորգյանի [4] տվյալներով՝ 13,4±0,03 տարեկանում։ Նման ցուցանիշներ են ունեցել նաև Ա. Ի. Կանչելին [7], Ա. Ս. Զավոդովան [6], Յու. Ֆ. Բորիսովան [2], Ռ. Կ. Միլլերեն [9], Ա. Ա. Տրդատյանը և Ե. Գ. Կալուգինան [13], սակայն այլ աշխարհագրական պայմաններում։ Հայտնի է, որ առաջին դաշտանից հետո այն ոչ միշտ է կանոնավոր ընթանում, երբեմն հաջորդ դաշտանն սկսվում է մի քանի ամիս, իսկ որոշ դեպքերում նաև մի քանի տարի անց։

Մեր հետազոտություններից պարզվել է, որ առաջին անգամ դաշտան ունենալուց հետո 400 աղջիկներից 321-ի մոտ (80,25%) դաշտանը կանոնավորվել է միանգամից, 14-ի մոտ (3,5%)՝ 3—4 ամիս հետո, 6-ի մոտ (1,5%)՝ մեկ տարի անց, 2-ի մոտ (0,5%)՝ 2 տարի անց, իսկ 37-ի մոտ (9,25%) այն եղել է անկանոն։

Տարբերվել եղել նաև դաշտանային ցիկլի տևողությունը, այն տատանվել է 21—40 օր, 18 դեպքում մնացել է անկանոն, իսկ 20 աղջիկներ (5%) դաշտան են ունեցել միայն մեկ անգամ (հետազոտության ժամանակ)։

Դաշտանային արտազատուկի տևողությունը ևս եղել է տարբեր՝ 43 աղջիկների մոտ (10,75%) տևել է 2—3 օր, 285-ի մոտ (71,25%)՝ 3—5, 60-ի մոտ (15%)՝ 5—7 օր, 12-ի մոտ (3%) 7 և ավելի օրեր։

Տարբեր է եղել նաև դաշտանային արտազատուկի ինտենսիվությունը, այն եղել է առատ 62-ի մոտ (15,5%), ոչ միշտ առատ՝ 4-ի (1%), քիչ քանակի 4-ի (1%) և չափավոր՝ 330-ի մոտ (82,5%)։

Առատ դաշտան նկատվել է տարբեր տարիքային խմբերում։

Երբեմն դաշտանն ուղեկցվել է ցավերով։ Մեր կողմից հետազոտված աղջիկներից 12-ը (3%) ունեցել են ուժեղ, 81-ը (20,25%)՝ չափավոր ցավեր, 33 աղջիկների մոտ (8,25%) ոչ բոլոր դաշտանային ցիկլերում են եղել ցավեր, իսկ 274-ի մոտ (68,5%) դաշտանն ընթացել է առանց ցավերի։ Որոշ դեպքերում դաշտանն ուղեկցվել է ընդհանուր թուլությամբ, նողկանքի զգացումով և փսխումով, իսկ երբեմն էլ ուշաթափությամբ։

Նշված երևույթները մեծ մասամբ նկատվել են դաշտանն սկսվելու առաջին տարիներին, կայուն բնույթ չեն կրել և հաճախ կապված են եղել վախի զգացման հետ։

Ամփոփելով Արտաշատի դպրոցական աղջիկների դաշտանային ցիկլի և սեռական հասունացման վերաբերյալ կատարված հետազոտությունների արդյունքները, հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Երկրորդային սեռական նշանների աճը և զարգացումը հիմնականում ընկրսվել է 11—12 տարեկան հասակում, շարունակվել է հաջորդ տարիներին, սերտորեն կապված է առաջին դաշտանն սկսվելու հետ, սակայն առաջանում է նրանից շուտ։

2. Աղջիկների մոտ դաշտանն սկսվել է 13,49±0,05 տարեկան հասակում, հիմնականում եղել է անցավ, կանոնավոր և նորմալ։

3. Երկրորդային սեռական նշանների զարգացումով և դաշտանի սկսումով դեռևս չի ավարտվել աղջկա սեռական հասունացումը, այն շարունակվել է նաև 18 տարեկանից հետո։

4. Անհրաժեշտ է դեռահասներին նախապատրաստել սեռական հասունացմանը, բացատրել աղջկա օրգանիզմի կենսաբանական առանձնահատկությունները, դաշտանի սկսման պատճառները, անհրաժեշտությունը, մեծ ուշադրություն դարձնելով անձնական հիգիենայի կանոնների պահպանմանը։

Երևանի մանկաբարձության և գինեկոլոգիայի
գիտահետազոտական ինստիտուտ

Ստացված է 22/II 1972 թ.

С. М. ГЕВОРКЯН

МЕНСТРУАЛЬНЫЙ ЦИКЛ И ПОЛОВОЕ СОЗРЕВАНИЕ У ШКОЛЬНИЦ АРТАШАТА

Резюме

Рост и формирование вторичных половых признаков тесно связаны со временем появления первой менструации и, как правило, проявляются раньше ее (в возрасте 12—14 лет).

Менструальная функция у школьниц Арташата начинается в возрасте 13,49±0,05 лет, в основном происходит регулярно, безболезненно, нормально. С развитием вторичных половых признаков и с появлением первой менструации еще не заканчивается полное половое созревание, оно продолжается и после 18 лет. Следовательно, до 18 лет половое созревание не считается законченным.

Необходимо тщательно подготовить подростков к наступлению менструации и половой зрелости, провести санитарно-профилактическую работу, разработать и объективно оценить новые мероприятия по улучшению здоровья школьниц.

ЛИТЕРАТУРА

1. *Арешев Г. Я.* Журнал акушерства и женских болезней, 1935, 45, 1, стр. 11.
2. *Борисова Ю. Ф.* Дисс. канд. М., 1965.
3. *Бутомо В. Г.* В кн.: Вопросы теоретич. обоснования и практических методов рационализации родовспоможения. Л., 1950.
4. *Геворкян С. М.* Сб. науч. труд. Научно-исследов. ин-та акуш. и гинекол. Ереван, 1970, стр. 335.
5. *Груздев В. С.* Курс акушерства и женских болезней. Ростов-на-Дону, 1962.
6. *Заводова А. С.* Дисс. канд. М., 1962.
7. *Канчели А. И.* Дисс. докт. Тбилиси, 1961.
8. *Маркарян П. А.* Акушерство. Ереван, 1960.
9. *Миллере Р. К.* Автореф. канд. дисс. Рига, 1965.
10. *Мусаелян В. М.* Автореф. канд. дисс. Ереван, 1965.
11. *Самсонова О. Я.* Автореф. канд. дисс. Ижевск, 1969.
12. *Ставицкая А. Б., Арон Д. И.* Методика исследования физического развития детей и подростков. М., 1959.
13. *Трдатьян А. А., Калугина Е. Г.* Избр. вопросы акуш. и гинекологии, т. 3. Новокузнецк, 1970, стр. 211.